

Կ Ա Ր Ծ Ի Ք

Հենրի Ագատի Մատինյանի «Հայ-լեհական կապերը 1991-2018 թվականներին» Է.00.01

«Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հենրի Մատինյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսական աշխատանքը նվիրված է հայ-լեհական դիվանագիտական, երկկողմ առևտրատնտեսական, ռազմական, գիտամշակութային մոտ 30-ամյա պատմությանը: Անհրաժեշտ նշել, որ աշխատանքը բավականին արդիական է, քանզի անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել Հայաստանի Հանրապետություն – Լեհաստանի Հանրապետություն երկկողմ հարաբերությունները նորանկախ Հայաստանի՝ աշխարհի երկրների միջազգային համագործակցությանը ինտեգրման տեսանկյունից: Հայոց նորանկախ շրջանի պատմության, հատկապես միջազգային հարաբերությունների, բազմաթիվ չուսումնասիրված էջեր կան, որոնք սպասում են իրենց լուսաբանմանը: Մասնավորապես Հայաստան – արտաքին աշխարհ հարաբերությունների զարգացման միտումները, թույլ տված սխալները, չօգտագործված հնարավորությունները: Այս առումով կարևոր ենք համարում աշխատանքներն այս ուղղությամբ, քանզի վերջին տարիների արտաքին քաղաքական ձախողումները, ներկա անորոշ իրավիճակը, Արցախյան 44-օրյա պատերազմում պարտությանը դեռ տասնամյակներ վերլուծելու և ամփոփելու կարիք ունի:

Ատենախոսական աշխատանքը շարադրված է մաքուր հայերենով, ներկայացված է գիտական պատշաճ մակարդակով և ունի սկզբնաղբյուրների հարուստ ցանկ: Հարկ եմ համարում շեշտել, որ ատենախոսը տիրապետելով լեհերենին, լայնորեն օգտագործել է լեհական սկզբնաղբյուրները, որն ատենախոսությունը դարձրել է

առավել ընդգրկուն ու հավաստի: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ, ինչպես ընդունված է, ատենախոսը ներկայացրել է աշխատանքի արդիականությունը, հիմնական նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը, աշխատանքի աղբյուրագիտական հենքը և մեթոդաբանությունը:

Առաջին գլուխը վերնագրված է «Հայ-լեհական քաղաքական կապերը 1991-2018 թթ.», որի չորս ենթագլուխներում ատենախոսն անդրադառնում է հայ-լեհական դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման ընթացքին, երկկողմ համագործակցության հիմնական միտումներին, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Լեհաստանի Հանրապետության դերակատարությանը և արձանագրված իրողություններին, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում հայ-լեհական կապերին, ներկայացվել և վերլուծվել է այդ հարցում պաշտոնական Լեհաստանի դիրքորոշումը, լեհական պարբերական մամուլում Հայոց ցեղասպանության մասին հրապարակումները, դրանց հիմնական բովանդակությունը:

Երկրորդ գլուխը կրում է «Հայ-լեհական առևտրատնտեսական և ռազմական կապերը 1991-2018 թթ.» վերնագիրը, որը բաղկացած է երկու ենթագլխից: Ատենախոսն այս գլխում ներկայացնում և վերլուծում է առևտրատնտեսական կապերը երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից մինչև 2018 թ.: Սկզբնական շրջանում այդ հարաբերությունները հիմնված էին Լեհաստանից ապրանքներ ներմուծելու վրա, սակայն Հայաստանում ներքին տնտեսական իրավիճակի կայունացումից հետո, սկսած 2000 թ. երկկողմ տնտեսական սկստիվության աճ գրանցվեց, ստեղծվեց հայ-լեհական միջկառավարական տնտեսական հանձնաժողով: Երկրորդ ենթագլխում

հետազոտվել են հայ-լեհական ռազմական համագործակցության դրվագներ, մասնավորապես առաջին համատեղ ռազմարդյունաբերական ձեռնարկության բացումը, որը, սակայն, կարճ կյանք ունեցավ:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է «Հայ-լեհական մշակութային և գիտակրթական կապերը 1991-2018 թթ», որը բաղկացած է երկու ենթագլխից: Այս գլխում ատենախոսը ներկայացնել և վերլուծել է երկկողմ մշակութային համագործակցության հիմնական դրսևորումները՝ մշակութային հուշարձանների պահպանությունից, երկու երկրների մշակույթի, լեզվի, գրականության տարածման համար նպաստավոր պայմաններ ստեղծումից մինչև մշակութային գործիչների համար փորձի փոխանակումներ, համատեղ մշակութային նախագծերի իրականացում, երկու հանրապետություններում անցկացվող մշակութային միջոցառումների մասնակցություն: Հետազոտվել է նաև երկկողմ համագործակցությանը գիտության և կրթության բնագավառներում՝ երկու երկրների աշակերտների, ուսանողների, մանկավարժների ու գիտնականների համար փորձի փոխանակման, հետազոտությունների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումից մինչև կոնկրետ նախաձեռնություններ՝ ուսման կրթաթոշակային ծրագրեր երկու երկրների բուհերում սովորելու համար, հայ և լեհ դիտնականների համատեղ գիտաժողովների և քննարկումների կազմակերպում:

Աշխատանքի չորրորդ գլուխը վերնագրված է «Լեհաստանի հայհամայնքի կացությունը 1991-2018 թթ», չունի ենթագլուխներ: Այստեղ հետազոտվել և վերհանվել են Լեհաստանի հայ համայնքի սկզբնավորման և ձևավորման օրինաչափությունները՝ 1990-ական թվականներից սկսած մինչև համարյա մեր օրերը: Շեշտված է, որ համայնքը ձևավորվել է ԽՍՀՄ փլուզումից սկսած մինչև 1998 թ. արտագաղթած հայերից, որոնք, չնայած բազմաթիվ դժվարությունների, ինտեգրվել են լեհական հասարակությանը:

Եզրակացության մեջ ատենախոսը ներկայացնում է աշխատանքի հիմնական դրույթները և դրանցից բխող եզրահանգումները:

Հենրի Մասինյանի ատենախոսությունը արդիական է և ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն՝ նորանկախ Հայաստանի ինքնուրույն արտաքին քաղաքականության պատմության հիմնական էջերը ուսումնասիրելու առումով: Գրախոսվող ատենախոսությունը թեմայի ընդգրկման առումով առաջիններից է և պետք է ասել, որ ատենախոսին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները:

Այժմ կցանականալի գրախոսվող աշխատանքի վերաբերյալ ներկայացնել մի քանի դիտողություններ և սխալներ:

1. Մեք կողմից առաջին և միակ կարևոր դիտողությունն այն է, որ ատենախոսության որոշ հատվածներ ունեն փաստագրական, ժամանակագրական և տարեգրային բնույթ: Մասնավորապես, առաջին գլխի առաջին ենթագլխի՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատման բաժնում, էջ 33-ից մինչև էջ 42-ը, ժամանակագրական կարգով թվարկվում են պատվիրակությունների փոխադարձ այցելությունները առանց վերլուծությունների: Նույնը վերաբերվում է նաև երրորդ գլխի մշակութային և գիտակրթական բաժիններին, երբ ժամանակագրական կարգով թվարկվում են անցկացված միջոցառումները՝ էջ 136-144, 146-158, 168-172:

2. Ատենախոսության գլուխների և ենթագլուխների եզրակացությունները հակիրճ են և չեն արտացոլում այն ողջ նյութը, որ շարադրված է համապատասխան բաժնում:

3. Ատենախոսությունում առանձին մտքեր բացահայտված չեն: Մասնավորապես էջ 110-ում նշված է, որ «Հայ-լեհական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման վրա նկատելի ազդեցություն ունեցավ 2013 թ. հունվարի 1-ին

Հայաստանի անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը»: Ինչ ազդեցություն, ցավոք սրտի, ատենախոսը բացատրություն չի տվել:

4. Ատենախոսության էջ 18-ում կա այսպիսի արտահայտություն. «լիազորել ՌԴ հյուպատոսությանը՝ հանդես գալու հայության անունից»: Ենթադրում եմ, որ ոչ մի հյուպատոսություն չի կարող հանդես գալ հայության անունից, այլ պետք է լինի Հայաստանի անունից:

5. Ատենախոսության էջ 27-ում Ռուբեն Ազիզբեկյանը ներկայացված է որպես Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, որը երբեք չի եղել, առավել ևս, որ 1997 թ. փետրվարին դեսպանն էր Յուրի Մկրտումյանը, նա ընդամենը խորհրդական էր:

6. Ատենախոսության էջ 51-ում 1993 թ. առումով օգտագործվում է Ակնա քաղաք անվանումը, որը այդ թվականին երբեք չի օգտագործվել, այլ օգտագործվել է սկսած 2000 թ., ուստի պետք է օգտագործվեր Ադդամ տեղանունը:


7. Ատենախոսությունում որոշ պաշտոնյաների անուններ ներկայացված են միայն սկզբնաձևով, որը, մեր կարծիքով թերություն է:

8. Ատենախոսության 57 էջում նշված է, որ Վրաստան այցելած Բ. Գերեմեկը քնարկել է Աբխազիայի և Ինգուշերիայի խնդիրներ, ենթադրելի է, որ Ինգուշերիայի փոխարեն պետք է լինի Օսեթիա, եթե նույնիսկ բնագրում այդպես է, ատենախոսը պետք է տար մեկնաբանում:

Իհարկե վերը նշված թեղությունները չեն կարող ազդել այն ծավալուն աշխատանքի վրա, որ կատարել է ատենախոսը՝ մասնագիտական խորհրդին ներկայացնելով բավականին հաջողված ատենախոսություն: Հեռևաբար, Հենրի Ազատի Մատինյանի «Հայ-լեհական կապերը 1991-2018 թվականներին» ատենախոսության աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացրած պահանջներին, ուստի միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ

պատմության հնատիտություն գործող մասնագիտական խորհրդին, նրան շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ որին միանգամայն արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության սպիտակ վարիչ, պատմական գիտությունների դոկտոր



Ամատունի Վիրաբյան

պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյան ստորագրությունը հաստատում է:



Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի

պրոռեկտոր, գիտությունների թեկնածու



Մարիամ Իսախիրյան

9.12.2024 թ.